


ՀՍԽՀ ՃԻՆԱՆՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴ. ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏ

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ

ԳՑՈՒՂՅԱՐԿԻ ԻՆՔՆԱՅԱՐԿՄԱՆ ՅԵՎ ԿՈՊԱՐԱՅԻՆ
ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԿԱՄՊԱՆԻԱՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ



Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

ԳՅՈՒՂԱՐԿԻ, ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՅԵՎ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱ- ՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԿՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԻՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

§ 1. Գյուղհարկի, ինքնահարկման, պետապահովա-
դրութեան վճարումների և ջրային տուրքի հաշվարկման
համար անխտիր բոլոր տնտեսութեաններում ամենուրեք
կատարվում է բնակչության, ցանքերի տարածութեան-
ների, անասունների քանակի և անհրաժեշտ այլ տվյալ-
ների հաշվառում:

Քաղաքներում և քաղաքատիպ վայրերում հաշվի
յեն առնվում անխտիր բոլոր տնտեսութեանները: Յե-
րևան, Լենինական և Ղարաքիլիսա քաղաքներում հաշ-
վառում չի կատարվում:

§ 2. Տնտեսութեանների հաշվառման տվյալները
գրվում են սահմանված ցուցակներում, այն է՝

1. Կուրեկտիվ տնտեսութեանների և գյուղատնտեսա-
կան հասարակ միավորների համար հաշվառման տվյալ-
ները— ձև № 1 ա քարտերում:

2. Կոլտնտեսականների տնտեսութեանների հաշ-
վառման տվյալները— ձև № 2 վ ցուցակներում:

3. Մենատնտեսների տնտեսութեանների հաշվառ-
ման տվյալները— ձև № 2 — գ ցուցակներում:

§ 3. Հաշվառման կամպանիայի ղեկավարութեանը
չրջաններում, գյուղհարկի կանոնադրության համա-
ձայն գրվում է չրջանային գործադիր կոմիտեների վրա,
վորոնք պարտավոր են՝

ա) տանել հաշվառման նախապատրաստական աշ-

խատանքներ, լախորեն բացատրել բնակչութեանը հաշվառման խոշորագույն նպատակների ու նշանակութեան մասին:

բ) ապահովել գյուղխորհուրդներին հաշվառման անհրաժեշտ նյութերով և բլանկներով:

գ) ժամանակին նախապատրաստել կոնարու նյութերը 1933 թ. աշնանացանի պլանի և 1934 թ. գարնանացանի պլանի մասին ըստ առանձին կոլտնտեսութեանների և գյուղխորհուրդների:

դ) մանրագնին հրահանգել գյուղխորհուրդներին հաշվառման կամպանիան կիրառելու և գյուղացուցակներէ առանձին սյունյակները լրացնելու կարգի մասին:

ե) կազմել հաշվառման որացուցային ծրագիր ըստ առանձին գյուղերի, նշելով յուրաքանչյուր գյուղի գյուղհարկի և ապահովագրութեան վճարումների հաշվառման սկիզբն ու վերջը:

Շրջործկոմները պետք է ապահովեն գյուղխորհուրդների հաշվառման աշխատանքների ամենօրյա սպեբառով հսկողութեանը: Գյուղխորհուրդներից ստացած հաշվառման բոլոր տվյալները պետք է յենթարկվեն մանրագնին ստուգման, վորպեսզի տեղի չունենա պետութեան խաբելու, տնտեսութեանների, անասունների քանակի և այլ որչեկտների թազցման, ինչպես և հաշվառման արդյունքների մասին սխալ տեղեկութեաններ կայացնելու փաստեր:

Հաշվառման նախապատրաստական աշխատանքները և կազմակերպումն պետք է դասավորել այնպիսի ձևով, վորպեսզի վերջանալուց հետո անմիջապես անպայման ստուգվեն հաշվառման բոլոր տվյալները և ապահովված լինի որչեկտների և յեկամուտների լրիվ ընդգրկումը:

§ 4. Հաշվառման կամպանիան գյուղում կիրառելու և հաշվառման արդյունքների ամբողջ ղեկավարութեանը և պատասխանատվութեան ընկնում է այն գյուղխորհուրդի վրա, վորի սահմաններում է գտնվում տվյալ գյուղը:

Գյուղխորհուրդները պետք է առաջնորդվեն շրջործկոմների ցուցմունքներով և այն որացուցային ծրագրով:

վոր սահմանված է շրջործկոմի կողմից տվյալ գյուղխորհուրդի համար:

Անասունների հաշվառումը բոլոր անտեսութեաններում (բացի կոլտնտեսութեաններից), վոչ գյուղատնտեսական և շուկայի յեկամուտների հաշվառումը մենատնտեսների տնտեսութեաններում, ինչպես և այլ տվյալները, գյուղխորհուրդները կատարում են տնտեսների հարցաքննութեան միջոցով—հարկային հանձնաժողովներում:

§ 5. Ցանքերի տարածութեանների, անասունների և այլ որչեկտների հաշվառումը կատարվում է հետևյալ հիմունքներով:

1. Մինչև հաշվառում սկսելը գյուղխորհուրդները պետք է իրենց տրամադրութեան տակ ունենան ստուգված տվյալներ 1933 թ. աշնանացանի պլանի և 1934 թ. գարնանացանի մշակույթների պլանի մասին ըստ առանձին կոլտնտեսութեանների, առանձին կոլտնտեսականների և մենատնտեսների: Թված տվյալները ցանքերի տարածութեան վերաբերյալ անմիջորեն գրանցվում են կոլտնտեսականների և մենատնտեսների գյուղացուցակների մեջ:

Առանձին ուշադրութեան է դարձվում ցանքերի տվյալները գյուղացուցակներում ճշտորեն գրանցելու վրա: Գյուղացուցակների մեջ գրվող գարնանային մշակույթների տարածութեանները և 1933 թ. աշնանացանի պլանի տարածութեանը պետք է հավասար լինեն աշնանացանի և գարնանացանի այն պլանին, վորը շրջործկոմի կողմից տրված է տվյալ կոլտնտեսութեանի և գյուղխորհուրդի ու բաշխված է վերջինի կողմից առանձին մենատնտեսների և կոլտնտեսականների միջև:

Բոլոր այն մշակույթների նկատմամբ, վորոնց համար սահմանված է պետութեանը հանձնելու առաջադրանքներ, գյուղացուցակներում գրվող թվերը պետք է համապատասխանեն այն տվյալներին, վորոնք հիմք են վերցրված այդ առաջադրանքների չափը վորոշելու համար:

Սյն դեպքերում, յերբ կոլտնտեսութեանի և մենատնտեսների գարնանացանի պլանի մեջ մտցված է աշ-



11-268889

նանացանի մշակույթների թերակատարված ցանքի տարածութուն, կրկնակի հարկումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է գյուղացուցակներում գրել վոչ թե սահմանված զարնանացանի պլանի ամբողջ տարածութունը, այլ աշնանացանի թերակատարած տարածութունը գուրս գարուց հետո:

Այն առանձին դեպքերում, յերբ տնտեսությանը տրված է պլան միայն հիմնական մշակույթների համար և յերկրորդական նշանակութուն ունեցող մշակույթները տվյալ շրջանում չեն տարածված և պլանով բոլորովին չեն նախատեսված, գյուղացուցակների մեջ պետք է գրել այդ մշակույթների փաստացի ցանքի տարածութունը:

2. Մյուս տվյալների հաշվառումը (այգիներ, խոտհարքներ), անասունների քանակն ինչպես և բնակչության տվյալները գրվում է կոլտնտեսութունների փաստացի տվյալների հիման վրա, իսկ կոլտնտեսականների և մենատնտեսների գյուղացուցակներում այդ տվյալների հաշվառումը գյուղական հարկային հանձնաժողովները կատարում են տնտեսների հարցաքննության միջոցով, վորոնք մանրակրկիտ ստուգվում են:

Հողի բոլոր տարածութունները (ցանք, խոտհարք, այգի և այլն) հաշվի յեն առնվում հեկտարներով: Առանձնապես յեկամտարեք հատուկ նորմաներով հարկվող մշակույթների տարածութունները (խաղողի և պտղատու այգիներ և այլն) գյուղացուցակներում ցույց են սրվում տասնորդական կոտորակներով 0,01 ճշտությամբ, իսկ մնացած մշակույթները մինչև 0,1 ճշտությամբ:

§ 7. Շրջգործկոմները պարտավոր են ցույց տալ գյուղխորհուրդներին ամենորյա ոգնութուն հաշվառման ամբողջ կամպանիայի ընթացքում:

Այդ նպատակով շրջանային գործկոմները մոբիլիզացիայի յեն յենթարկում շրջանային ապարատից այնքան աշխատակիցներ, վորքան անհրաժեշտ է հաշվառման կամպանիայի ընթացքում բացատրական աշխատանք, հրահանգում, գյուղացուցակների լրացում, հաշ-

վառման արդյունքների ստուգում կատարելու համար և այլն:

Հրահանգչական աշխատանքներին և գլխավորապես հաշվառման արդյունքների ստուգմանն անպայման պարտադիր կարգով պետք է մասնակցեն ժողտնտ. հաշվառման տեսուչները:

Հաշվառման աշխատանքը պետք է հանձնարարել քաղաքականապես ստուգված ու փորձված անձանց, (վորոնց կարելի յե հավատալ և վորոնք նվիրված են սոցիալիստական շինարարության գործին): Հաշվառում կատարող աշխատակիցների ուշադրութունը պետք է սրել այն բանի վրա, վորպեսզի կոլտնտեսականների, կոլտնտեսութունների և մենատնտեսների բոլոր որյեկտները և յեկամ ուտի աղբյուրները հայտնաբերվեն ու հաշվի առնվեն լրիվ չափով:

Որյեկտները քաղցնելու և սխալ տեղեկություններ տալու յուրաքանչյուր դեպքին պետք է մոտենալ վորպես պետությանը խաբելու փաստի և մեղավորներին յենթարկել քրեական պատասխանատվության իսկ ֆինբաժնի և ժողտնտ. հաշվառման տեսուչներին, վորոնք քույլ են տվել որյեկտների քաղցում, պետք է մոտենալ վորպես պետությանը խաբող անձնավորություններին աջակցողների:

2. ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.

§ 8. Գյուղացուցակներում պետք է գրվեն անխտիր բոլոր մենատնտեսները, վորոնք գտնվում են տվյալ գյուղխորհրդի սահմաններում (տեբրիտորիայում) անկախ նրանից զբաղվում են նրանք գյուղատնտեսությամբ թե վոչ: Այսպիսով գյուղացուցակի մեջ պետք է գրվեն թե գյուղատնտեսութուն ունեցող գյուղացի մենատնտեսները և թե բանվորների, ծառայողների, տնայնագործների այլ տնտեսութունները, վորոնք ապրում են կողմնակի աշխատանքներով:

Մասնավորապես գյուղացուցակներին մեջ պետք է անպայման գրվեն յերկաթուղային և ջրային, խճուղային և գրունտային տրանսպորտի գծային աշխատակից-

ների տնտեսութիւնները, վորոնք բնակվում են տրանսպորտին հատկացված հողի վրա և կցված են տվյալ գյուղխորհրդին:

Յեթե միևնույն տանն ապրում են յերկու և ավելի ընտանիքներ, վորոնք վարում են ինքնուրույն տնտեսութիւններ, այդ դեպքում յուրաքանչյուր ընտանիքը գյուղացուցակում գրվում է առանձին:

§ 9. Բոլոր գյուղհարկ վճարողները, հաշվի յեն առնրվում այն վայրում, վորտեղ գտնվում են նրանց տնտեսութիւնները:

Գյուղխորհրդի սահմաններից ժամանակավոր բացակայող քոչվոր անասնապահական տնտեսութիւնները հաշվի յեն առնվում իրենց հիմնական բնակատեղում, իսկ յեթե անհնարին է վորոչեւ նրանց մշտական բնակատեղը, նրանք հաշվի յեն առնվում այնտեղ, վորտեղ գտնվում են հաշվառման պահին:

§ 10. Նախքան հաշվառում սկսելը, գյուղխորհուրդը հրավիրում է գյուղի հասարակութիւն ընդհանուր ժողով, վորտեղ պարտավոր է՝

ա) ծանոթացնել գյուղացիներին գյուղհարկի և գրույքային ապահովագրութիւն, հիմնական սկզբունքների, արտոնութիւնների, վճարողների ու նրանց յեկամուտի աղբյուրների հաշվառման կարգի հետ:

բ) մանրամասն պարզարանել, վոր յեկամուտների աղբյուրները— անասունների, այգիների, խոտհարքների վոչ գյուղատնտեսական յեկամուտների և այլն թագցնումները պետք է համարվի վորպես պետութիւնը իարելու յերնույթ, վորի համար վճարողները յենժակա յեն խիստ պատասխանատուութիւն վարչական (տուրանքի) կամ դատական կարգով, ինչպես և պարզարանել, վոր թագցնողներին ապահովագրական վարձատրութիւն չի տրվում:

§ 11. Հաշվառումից առաջ բոլոր տնտեսներին պետք է հայտարարվի հաշվառման մասին:

Տնտեսները պարտավոր են ներկայանալ գյուղական հարկային հանձնաժողովին նշանակված ժամանակին, ունենալով իրենց մոտ հետևյալ փաստաթղթերը.

ա) կարմիր բանակայինների, հաշմանդամների ար-

տոնութիւններով ոգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթեր: Յեթե կարմիր բանակայինի տնտեսութիւնը հաշվառման պահին այդպիսի փաստաթուղթ չի ունենա, ապա գյուղխորհուրդն այդպիսի տնտեսութիւն ախուամենայնիվ պետք է հաշվի առնի, վորպես կ. բանակայինի—տեղական զինմարմինների ցուցակները հիման վրա:

բ) տնտեսութիւն անցյալ տարվա ընթացքում ունեցած վոչ-գյուղատնտեսական յեկամուտների չափի մասին փաստաթղթեր, յեթե այդպիսիք ներկայացված չեն յեղել գյուղխորհրդին նախքան հաշվառում սկսելը:

§ 12. Հաշվառման համար տեղեկութիւններ, վորոնց հիման վրա լրացվում է գյուղացուցակում բնակչութիւն, անասունների, խոտհարքների, այգիների, վոչ-գյուղատնտեսական և շուկայի յեկամուտների տվյալները, տալիս է տնտեսութիւն գլխավորը, իսկ նոա ժամանակավոր բացակայութիւն դեպքում տնտեսութիւն չափահաս անդամները: Անչափահաս անդամների ցուցմունքների հիման վրա գյուղացուցակ լրացնելն արգելվում է:

Շնչերի, անասունների, խոտհարքների, այգիների և այլ տնկարանների մասին հարցաքննութիւնը վերջացնելուց հետո, հարկատուն պետք է գյուղացուցակի «ծանոթութիւն» սյունյակում ստորագրի իր ցուցմունքների ճշտութիւն մասին:

§ 13. Բաժանված տնտեսութիւնները— հաշվի յեն առնվում բաժան, միայն այն դեպքում, յերբ նրանք ձևակերպված վկայականների համաձայն փաստորեն բաժան տնտեսութիւն են վարում: Հակառակ դեպքում, այսինքն՝ յերբ տնտեսութիւնը ներկայացնում է համապատասխան ձևակերպված վկայական բաժանման մասին, բայց փաստորեն անբաժան տնտեսութիւն է կազմում— պետք է հաշվի առնվեն վորպես մեկ, այլ վոչ թե յերկու տնտեսութիւն:

§ 14. Տնտեսիւրջ հարցաքննութիւն ժամանակ, գյուղհարկային հանձնաժողովները պետք է ունենան իրենց ձեռքի տակ անցյալ տարվա գյուղացուցակները, և

ողտադործեն այդ ցուցակները տնտեսիքի ցուցմունքները ստուգելու համար: Բացի այդ այնտեղից պետք է տեղափոխել 1934 թ. մենատնտեսների գյուղացուցակի մեջ 1933 թ. հաշվառման 3 տարեկանից վեր կովերի, ցուլերի և ձմեռած վոջխարների ու այծերի քանակը:

§ 14. Տնտեսիքի ցուցմունքների ճշտությունը համեմատվում է անցյալ տարվա տվյալների հետ, հարևան գյուղացիների ցուցմունքների հետ և այլն:

Այն դեպքերում, յերբ գյուղհարկային հանձնաժողովները կգտնեն տնտեսիքի տված տեղեկություններն անբավարար, անմիջապես պետք է կատարեն յեկամտի աղբյուրների փաստացի ստուգում և թագցրած աղբյուրներ հայտնաբերելու դեպքում, կազմեն արձանագրություն մեղավորներին պատասխանատվության յենթարկելու համար, չսպասելով մինչև հաշվառման վերջը:

§ 15. Հաշվառման արդյունքները պետք է անպայման քննության առնվեն տվյալ գյուղի համայնքի ընդհանուր ժողովում: Յեթե քննությունից հետո պարզվի, վոր այս կամ այն տնտեսության շնչերի, անասունների կամ ուրիշ որյեկտների վերաբերյալ տեղի յե ունեցել սխալ գրանցումներ, կամ կան բաց թողնված տնտեսություններ, գյուղական հարկային հանձնաժողովն անմիջապես պետք է մտցնի անհրաժեշտ ուղղումներ գյուղացուցակների մեջ: Քննության արդյունքները մտցվում է արձանագրության մեջ:

Վերջինի պատճեն ուղարկվում է շրջֆինբաժնին:

§ 16. Հաշվառման աշխատանքները վերջացնելուց հետո գյուղհարկային հանձնաժողովի անդամները պետք է ստորագրեն գյուղացուցակների վերջում:

Ստուգումներից և անհրաժեշտ դեպքերում ուղղումներ մտցնելուց հետո, գյուղխորհուրդը պետք է հաստատի գյուղացուցակն իր ստորագրությամբ և կնիքով:

ա) Մենատնտեսների տնտեսությունների համար սահմանված գյուղացուցակի լրացնելու կարգը

§ 17. Գյուղացուցակի 1-ին սյունյակում գրվում է տնտեսության համարը:

Յեթե մինչև հաշվառումն սկսելը գյուղխորհուրդների կողմից արդեն կազմված է տնտեսությունների ցուցակը (ձև № 4), ապա գյուղացուցակի մեջ անմիջապես փոխանցվում է տնտեսության համարն այդ ցուցակից: Իսկ յեթե մինչև հաշվառումն այդ ցուցակը կազմված չէ, հաշվառումը վերջացնելուց հետո պետք է կազմել ձև № 4 ցուցակը և գյուղացուցակից բոլոր տնտեսությունները գրանցել ձև № 4 ցուցակի մեջ: Ցուցակի մեջ գրելուց հետո յուրաքանչյուր տնտեսությունը ստանում է մըշտական համար, վորը հետագայում չպետք է յենթարկվի փոփոխման:

Տնտեսության համարակալումը պետք է լինի միանակալ ամբողջ գյուղխորհրդում:

§ 18. 2-րդ սյունյակում պետք է գրել տնտեսության տիրոջ լրիվ ազգանունը, անունը և հայրանունը:

§ 19. 3—5-րդ սյունյակներում պետք է գրել, տնտեսության բոլոր շնչերի թիվը հետևյալ կարգով՝

3-րդ սյունյակում պետք է գրել բոլոր շնչերը— (մշտապես ապրող և ժամանակավորապես բացակայող ընտանիքի անդամներին):

Շնչերի թիվ մեջ չպետք է մտնեն այն անձինք, վորոնք կտրել են փրենց կապը տնտեսությունից, չեն ոգնում ընտանիքին և չեն մասնակցում աշխատանքներին:

4-րդ սյունյակում պետք է գրել 3-րդ սյունյակում մատնանչված շնչերից նրանց, վորոնք բացակայում են 3 ամսից ավելի և չեն կտրել փրենց կապը տնտեսության հետ:

5-րդ սյունյակը լրացվում է միայն այն դեպքում, յեթե տնտեսության մեջ կա 3 կամ ավելի անաշխատունակ անդամներ, իսկ աշխատունակների թիվը միաժամանակ չի գերազանցում 2 մարդուց:

Այդպիսով յեթե տնտեսության մեջ կան 3 կամ ար

վերի աշխատունակներ ապա «նույն թվում անաշխատու- նակության արտոնություններով ոգտվողները» սյունյա- կը չի լրացվում, վորքան ել լինի անաշխատունակները թիվը:

Անաշխատունակ են համարվում 1) բացարձակ հաշվանդամները, 2) մինչև 16 տարեկան հասակ ունե- ցողները 3) 60 տարեկանից վեր տղամարդիկ և 55 տա- րեկանից վեր կանայք:

§ 20. Ֆանքերի տարածությունների հաշվառման համար հատկացված սյունյակները լրացնելու ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալով՝

Անբերրիութունից ապահովագրվող ցանքի սյունյակները (6-ից—8-ը) պետք է լրացվեն նույն սյունյակների վերնագրերի համաձայն, այսինքն 6-րդ սյունյակում պետք է գրել ծխախոտի տարածությունը, 7-րդ բամբակի ամբողջ տարածությունը, իսկ 8-րդ ազատ սյունյակում պետք է գրել անբերրիութունից ապահովագրվող այն մշակույթները, վորոնց համար հատուկ սյունյակներ չեն հատկացված (սոյա, կենաֆ): Այդ մշակույթների տարածությունները պետք է վերց- նել յուրաքանչյուր տնտեսությանը տրված պլանի հա- մեմատ:

§ 21. 9-ից—11-րդ սյունյակներում պետք է գրել Հատիկային և ընդեղեն ցանքի պլանով սահմանված տարածությունները (ցորեն, դարի, յեզիպտացորեն, հաճառ, վարսակ, լոբի, սիսեռ և այլն): Հատիկային և արևածաղկի ցանքերը, վորոնք պլանով նախատեսված են սիլոսի համար, այդ սյունյակներում չեն գրվում, այլ գրվում են բնական խոտհարքների սյունյակում: Հա- տիկային ցանքերի այն տարածությունը, վորը հատկացված են խոտի կամ կերի համար և հնձվում է կանաչ դրության մեջ հաշվի է առնվում վորպես, ցա- նովի խոտ:

§ 22. 12-րդ սյունյակում գրվում է չալթուկի ոտն- քի տարածությունը:

§ 23. 13—14-րդ սյունյակներում պետք է գրել ցա- նովի խոտերի տարածությունը (կորնգան, յոնջա և

այլն), այն է՝ 13-րդ սյունյակում պետք է գրել նախ- կին տարիների ցանքով բուսված տարածությունը, իսկ 14-րդ սյունյակում 1934 թ. պլանով սահմանված ցա- նովի խոտի տարածությունը: Յեթե խոտի ցանքը կա- տարված է ուրիշ մշակույթների հետ խառն, ապա այդ խառն ցանքը չպետք է գրել խոտի սյունյակում, այլ պետք է գրել ավյալ մշակույթի համար հատկացված սյունյակում:

§ 24. 15—16-րդ սյունյակներում պետք է գրել կտավհատի տարածությունը, ըստ վորում 15-րդ սյուն- յակում պետք է գրել հարկվող իսկ 16-րդում ազատվող տարածությունը:

Որենքով յերկարամազ կտավհատի այն ցանքերը, վորոնք ցանված են առվույտի և աչնանը վարած խամ հողամասերի վրա ազատվում է հարկումից: Այս արտո- նությունը տալու համար կտավհատի ցանքերը պետք է հաշվի առնել վերոհիշյալ կարգով:

§ 25. 17-րդ սյունյակում պետք է գրել կանեփի տա- րածությունը:

§ 26. 18-րդ—19-րդ սյունյակում պետք է գրել կարտոֆիլի ընդհանուր տարածությունը (դաշտում և բանջարանոցում), իսկ 19-րդ սյունյակում պետք է ցույց տալ ջրովի կարտոֆիլի տարածությունը:

§ 27. 20-րդ և 21-րդ սյունյակներում պետք է գրել այդ սյունյակների վերնագրերում մատնանշված մշակույթների տարածությունը, այն է 20-ում բանջա- բանոցների, 21-ում բախչաների—բոստան (ձմերուկ, սեխ, դդում) տարածությունը:

§ 28. 22-րդ սյունյակում պետք է գրել այլ մշա- կույթների (բենդիրի, ումիլի, կաուչուկաբերի, զաֆ- բանի, չաքարի ճակնդեղի և այլ) տարածությունը, նա- յած թե վորը կլինի գյուղում:

§ 28. 23-րդ սյունյակում պետք է գրել տնտեսու- թյան 1934 թ. ամբողջ ցանքի տարածությունը, այսինքն 6—22-րդ սյունյակների ավյալները, բացի 10 և 19-րդի ավյալներից:

§ 29. 24-րդ սյունյակում պետք է գրել տնտեսու-

թիւն դաշտամշակութիւն նորմաներով հարկվող ցանքի տարածութիւնները, այն է՝ 9, 11, 13, 14, 15, 17 և 22-րդ սյունյակների տվյալները:

§ 30. 25-րդ սյունյակում պետք է գրել 24-րդ սյունյակում ցույց տրված ցանքի միայն ջրովի տարածութիւնը:

§ 31. 26—28-րդ սյունյակներում պետք է գրել այգիները և այլ տնկարանները, այն է՝ 26-րդում գրվում է պտղաբեր պտղատու այգիները, 27-րդում պտղաբեր խաղողի այգիները, իսկ 28-րդում թթենու տնակարանները: Սաղողի և պտղատու այգիների տարածութիւնը պետք է հաշվի առնել լրիվ չափով անկախ նրանից այդ տարածութիւնները գտնվում են դաշտում թե ագարակում, զբաղեցնում են նրանք ամբողջ տարածութիւնը թե մի մասը, կամ պտղատու ծառերը տնկված են խիտ թե նոսր:

—Մանրութիւն.— Յեթե տնտեսութիւններն չառանձնացված և տարբեր տեղերում պրտաատու պարտեզ, վորտեզ ծառերը չափազանց նոսր են, ապա հաշվի պետք է առնել ծառերի քանակը և յեղնելով շրջագործկոմի կողմից սահմանված նորմաններից, ծառերի քանակի համեմատ վորոշել պտղատու պարտեզի տարածութիւնը:

Որինակ՝ յենթադրենք, վոր տվյալ շրջանում կորիզավոր պտղատու ծառերի (խնձորի, տանձի և այլն) համար ընդունված է միջին նորման վերածված տարածութիւն 0,01 մեկ ծառի համար: Ընդամենը հաշվառված է 245 այգիպիսի ծառեր: Վորպեսզի վորոշենք այդ ծառերով բռնված տարածութիւնը պետք է 0,01-ը բազմապատկենք 245-ի վրա և ստացված թիվը գրենք պտղատու ծառերի սյունյակում $0,01 \times 245 = 2,45$ հեկտար:

§ 32. 29 և 30-րդ սյունյակները հաշվառման ժամանակ չեն լրացվում և չեն գծվում:

§ 33. 31 և 32-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսութիւնը պատկանող բոլոր փեթակների քանակն այդ սյունյակների վերնագրերի համեմատ:

§ 34. 33 և 34-րդ սյունյակներում պետք է գրել

տնտեսութիւն մեջ վորպես խոտհարք ոգտագործվող բոլոր տարածութիւնները:

Հողի այն տարածութիւնը, վորը ծածկված է թփուտներով կամ անտառով և ոգտագործվում է իբրև խոտհարք հաշվի չէ առնվում վոչ թե չրիվ չափով, այլ հաշվի է առնվում փաստորեն հնձվող տարածութիւնը:

Մարգագետինների այն տարածութիւնները, վորոնք հատկացված են լավ խոտհարք ստանալու համար, հաշվվում են իբրև խոտհարքներ:

§ 35. 35—37-րդ սյունյակները հաշվառման ժամանակ չեն լրացվում և չեն գծվում:

§ 36. Անասնապահութիւն համար հատկացված սյունյակում պետք է գրել մենատնտեսների բոլոր անասունները: Ժամանակավորապես բացակայող անասունները (գրսի աշխատանքում գտնվող, ամառային արոտավայրերը քշված և այլն) նույնպես հաշվի չեն առնվում և գրվում են գյուղցուցակում:

Տնտեսութիւն բոլոր անասունները գրվում են գյուղցուցակում հասակների այն ստորաբաժանումով, վորոնք նշված են գյուղցուցակներում: Առանձին ուշադրութիւն պետք է դարձնել լրիվ հաշվառման և յերիտասարդ անասունների հասակը վորոշելու վրա: Այդ նպատակով գյուղցուցակը լրացնելու ժամանակ անպայման պետք է վորոշել անասունների ծնվելու ժամանակը: Բացի դրանից տնատիրոջ ցուցմունքները պետք է համեմատվեն անցյալ տարվա տվյալների հետ և պարզվեն տարբերութիւն պատճառները: Այնուհետև անասունների տվյալները պետք է համեմատու թա 11 34 թ. հաշվառման տվյալների հետ: Համեմատութիւն պիտի դնել 9 շրջաններում՝ Լենինական, Վեդի, Դիլիջան, Քեշիշքենդ, Նոր Բայազետ, Ղարաքիլիսա, Ստեփանավան, Ախտա, Թալին, կատարված վերահաշվառման տվյալների հետ ըստ առանձին հասակների և սեռի: Պետք է ուշադիր լինել լրիվ հաշվի առնելու մատղաշ չհարկվող անասունները, վորոնք անցյալում շատ թերի յեն հաշվի առնվել:

Բանող ձիեր պետք է հաշվել այնպիսիներին, վոր

րոնք (յերբեխցե) ոգտագործվել են դաշտային կամ փոխադրական աշխատանքներում:

§ 37. 68-րդ սյունյակում պետք է գրել անցյալ տարվա գյուղացուցակից ցուլերի, յերինջների և կովերի ընդհանուր քանակը, վորը պետք է վերցնել 1933 թ. ցուցակի 50 և 52 սյունյակներից:

§ 38. 69-րդ սյունյակը լրացնելու համար պետք է վերցնել այս տարվա գյուղացուցակի 63, 64 և 67-րդ սյունյակների տվյալները և համեմատել 68-րդ սյունյակի քանակի հետ: Յեթե պարզվի, վոր այս տարվա հաշվարկը պակաս է կամ անփոփոխ է մնում անցյալ տարվա համեմատությամբ, 69-րդ սյունյակում պետք է գրել 63, 64 և 67-րդ սյունյակների քանակը (իբրև հարկվող), 70-րդ սյունյակն այդ դեպքում պետք է զծել:

Իսկ յեթե պարզվի, վոր 63, 64 և 67-րդ սյունյակների քանակը ավելի յե 68-րդ սյունյակի քանակից, տարբերությունը պետք է գրել 70-րդ սյունյակում, վորպես «ազատվող ավելցուկ», իսկ 69-րդ «հարկվող» սյունյակում այս դեպքում պետք է գրել անցյալ տարվա քանակը:

§ 39. Մատակների հոտի նկատմամբ գյուղացուցակի 83-85-րդ սյունյակները լրացվում են § 38 նշված կարգով, իսկ անցյալ տարվա տվյալները վերցվում են 1933 թ. գյուղացուցակի 63 և 65-րդ սյունյակներից և գրվում են 1934 թ. գյուղացուցակի 83-րդ սյունյակում:

§ 40. 95-103-րդ սյունյակներում պետք է գրել հաշվառված վոչխարների և այծերի թիվը գյուղացուցակի համապատասխան սյունյակներում նշված հասակների համեմատ:

101 և 103-րդ սյունյակները պետք է լրացնել հետևյալ կարգով.

101-րդ սյունյակում պետք է գրել 1933 թ. հաշվառված վոչխարների և այծերի քանակը, այսինքն փոխադրել անցյալ տարվա գյուղացուցակի 72 և 74-րդ սյունյակների տվյալները:

102-րդ սյունյակը լրացնելու համար պետք է վերցնել 96 և 99-րդ սյունյակների վոչխարների և այծերի

քանակը և համեմատել 101-րդ սյունյակում նշված քանակի հետ: Յեթե տնտեսության ձմեռած վոչխարների և այծերի քանակը պակաս է կամ չի ավելացել անցյալ տարվա համեմատությամբ ապա 102-րդ սյունյակում պետք է գրել 96 և 99 սյունյակների նշված վոչխարների և այծերի թիվը իբրև «հարկվող», իսկ 103-րդ սյունյակն այդ դեպքում պետք է զծել:

Իսկ յեթե պարզվի, վոր 96 և 99-րդ սյունյակների տվյալները ավելի յեն 101-րդ սյունյակի տվյալներից, տարբերությունը պետք է գրել 103-րդ սյունյակում վորպես ազատվող ավելցուկ, իսկ 102-րդում ցույց տալ անցյալ տարվա քանակը:

Ձմեռած վոչխարներ և այծեր են համարվում մինչև 1934 թ. հունվարի 1-ը ծնվածները:

բ) Շուկայում գոյացող գներով գյուղատնտեսական մքերքները վաճառելուց ստացած յեկամուտների վորոշելու կարգը

§ 41. Շուկայում ազատ գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց ստացած յեկամուտները հաշվի յեն առնվում հատուկ ցուցակով:

§ 42. Մենատնտեսների այդ յեկամուտները վորոշվում են 1933 թ. հաշվառման պահից սկսած մինչև 1934 թ. հաշվառում կատարելու որը ստացած գումարի հաշվով:

§ 43. Կոպերացիային վաճառված հացի և այլ գյուղատնտեսական մթերքների յեկամուտները հաշվի չպետք է առնվեն:

§ 44. Շուկայում ազատ գներով գյուղատնտեսական մթերքների վաճառքի յեկամուտներ համարվում են մթերքների վաճառքի յեկամուտները (նույն թվում նաև դրանքի վաճառքի յեկամուտները (նույն թվում նաև դրանքի վաճառքի յեկամուտները) չհարկվող յեկամուտները որինակ թռչունների, յագերի և այլնի վաճառքից ստացած յեկամուտները):

§ 45. Այդ յեկամուտները վորոշելու ժամանակ

206694



Առանձին դեպքերում գյուղական հարկային հանձնաժողովներն իրավունք ունեն յլրիվ կամ մասնակի չափով ազատել այդ յեկամուտները:

§ 54. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտ ունեցող բոլոր տնտեսությունները ցուցակագրվում են առանձին արձանագրություն-ցուցակում (այլ վոչ գյուղացուցակում) այդ արձանագրության ցուցակը գյուղհարկ-հանձնաժողովը լրացնում է հետևյալ կարգով՝

- ա) 1-ին սյունյակում ցույց է արվում համարներն ըստ կարգի.
- բ) 2-րդ սյունյակում տնտեսության №-ն ըստ գյուղացուցակի.
- գ) 3-րդ սյունյակում գրվում է անուն, ազգանունը.
- դ) 4-րդ սյունյակում գրվում է վոչ-գյուղատնտեսական զբաղմունքի մանրամասն անվանումն (հյուանդարրին-ըրաղաց և այլն):
- յե) 5-րդ սյունյակում գրվում է ձեռնարկության մեջ աշխատողների թիվը (վարձու բանվորների և ընտանիքի անդամների թիվը):
- զ) 6-րդում գրվում է թե ձեռնարկության մեջ վորքան որամարդ և աշխատել (քանի մարդ, քանի որ է աշխատել մեկ թվով):
- է) 7-րդում որվա միջին յեկամուտը.
- ը) 8-րդում ստացված ընդհանուր յեկամուտը առանց ծախսերը դուրս գրելու.
- թ) 9-րդում արտադրական ծախսերի ընդհանուր գումարը.
- ժ) 10-րդում հումույթի և կիսաֆարրիկատի արժեքը.
- ի) 11-րդում այլ ծախսեր՝ այն է շենքի և բանվորների վարձը վառելիքի, բանող անասունների և այլն.

- լ) 12-րդում ընդհանուր յեկամուտը դուրս յեկած արտադրական ծախսերը (8-րդից-9-րդը).
- խ) 13-րդ սյունյակը հաշվառման ժամանակ չի լրացվում և չի գծվում:

§ 55. Գյուղական հարկային հանձնաժողովները վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամուտները վորոշելուց հետո, լրացված արձանա-

գրություն-ցուցակը գյուղացուցակի և չուկայում գոյացած գներով մթերքների վաճառքից յեկամուտ ունեցող տնտեսությունների ցուցակի հետ միասին, ներկայացնում են շրջգործկոմիին հաստատելու և հարկելու համար:

դ) Կուլակային տնտեսությունների հաշվառման կարգը.

§ 56. Անհատական կարգով հարկվող կուլակային տնտեսությունների հաշվառումը կատարվում է նույն գյուղացուցակում, վորը սահմանված է աշխատավոր մենատնտեսների համար, սակայն գյուղացուցակի «ծանոթության» սյունյակում պետք է նշանակել «կուլակային»:

Ցանքի, անասունների, խոտհարքների և այլն սյունյակները լրացվում են նույն կարգով և կանոններով, վորոնք սահմանված են մյուս կատեգորիայի տնտեսությունների համար:

Շուկայի գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելու յեկամուտների սյունյակը չի լրացվում:

3. ԿՈՒՆՏԵՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

§ 57. Կուլտնտեսականների հաշվառման ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալ կարգով՝

Կուլտնտեսության մեջ մտնող յուրաքանչյուր կուլտնտեսական պետք է անպայման գրվի գյուղացուցակում (ձև § 2-վ) անկախ այն հանգամանքից ունի նա չհանրայնացված յեկամուտի աղբյուրներ, թե վոչ (ադարարային ցանք, անասուն և այլն): Գյուղացուցակներում կային ցանք, անասուն և այլն կուլտնտեսականները, վորոնք հանգրվում են նաև այն կուլտնտեսականները, վորոնք հանրայնացրել են վոչ միայն իրենց բոլոր յեկամուտի աղբյուրները, այլև բնակելի շենքերը:

Կուլտնտեսություններում աշխատող գյուղատնտեսների, ուսուցիչների, հաշվետարների և այլ տնտեսությունները հաշվի են առնվում վորպես կուլտնտեսականների տնտեսություններ, յեթե նրանք կուլտնտեսության անդամ են:

Կոլտնտեսութեան բացակայող անդամները, յետե նրանք հանված չեն կոլտնտեսութեանը, հաշվի չեն առնվում վորպես կոլտնտեսականներ:

Այն մենատնտեսները, վորոնք հաշվառման պահին մտել են կոլտնտեսութեան մեջ, սակայն դեռ չեն ձեռնարկել ցանքի և անասունների հանրայնացումը, պետք է հաշվի առնվեն վորպես կոլտնտեսականներ:

Յերբ աշխատավոր մենատնտեսների նկատմամբ կատարվում է գյուղհարկի վերահաշվարկ կոլտնտեսութեան մտնելու հետևանքով, այդ տնտեսութեանները մենատնտեսների ցուցակից հանվում և գրվում են կոլտնտեսականների ցուցակում տեղափոխելով այն որ յեկտները վորոնք կոլտնտեսութեան մտնելուց հետո մնացել յեն չհանրայնացված:

Կոլտնտեսականների գյուղացուցակի լրացնելու կարգը

§ 58. Կոլտնտեսականների տնտեսութեանների հաշվառման համար սահմանված է ձև № 2 վ, գյուղացուցակը, վորի մեջ հաշվառման տվյալները համապատասխան սյունյակներում ըստ նրանց վերնագրերի լրացվում են նույն սկզբունքներով և ձևերով, վորոնք սահմանված են մենատնտեսների համար:

Յեթե կոլտնտեսականը չունի գյուղատնտեսական հարկվող յեկամուտ (ցանք, այգի և այլն) սակայն ստանում է գյուղհարկի յենթակա վոչ գյուղատնտեսական յեկամուտ ապա «ծանոթութեան» սյունյակում պետք է ցույց տալ վոչ-գյուղատնտեսական յեկամտի անունը, իսկ ստացված գումարը հաշվի չառնել: Այդ գրվում է նրա համար, վորովհետև կոլտնտեսականներն այդ յեկամուտներից վճարում են գյուղհարկ:

§ 59. Անասունների սյունյակները լրացնելու ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր հանրայնացված անասունները, վորոնք հաշվառման պահին ժամանակավորապես գտնվում են կոլտնտեսականների մոտ չպետք է գրվեն կոլտնտեսականների գյուղացուցակում, այլ պետք է գրվեն կոլտնտեսութեան քարտում:

§ 60. Կոլտնտեսականների տնտեսութեաններում շուկայում գոյացող գներով գյուղատնտեսական մթերքները վաճառելուց ստացած յեկամուտները հաշվառման յենթակա չեն:

4. ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

§ 61. Կոլտնտեսութեան հաշվառման քարտը (ձև № —1 ա.) լրացվում է 2 որինակից: Գյուղհարկի, պետապահովագրման վճարի և ջրային տուրքի հաշվարկը վերջացնելուց հետո մեկ որինակը պահվում է Ֆինրաժնում, իսկ մյուս որինակը վճարման ծանուցագրի հետ միասին ուղարկվում է կոլտնտեսութեան վարչութեանը:

§ 62. Քարտի վերնագրում պետք է գրել այն վայրը, վորտեղ գտնվում է կոլտնտեսութեանը (չրջան, գյուղ, գյուղխորհուրդ): Բացի այդ նույն վերնագրում պետք է գրել տվյալ կոլտնտեսութեան կանոնադրութեամբ սահմանված նրա ձևը (կոմունա, արտել, միատեղ հող մշակող ընկերութեան, արհեստագործական կոլտնտեսութեան) և նրանց լրիվ անվանումը, որինակ «Վորոչիլովի անվան գյուղատնտեսական արտել» և այլն:

§ 63. 1-ին սյունյակում պետք է գրել կոլտնտեսութեան մեջ հաշվառման պահին յեղած ընտանիքների թիվը: Ընտանիք ասելով պետք է հասկանալ մի խումբ անձնավորութեաններ, վորոնք կապված են ազգակցական կապերով, ընդհանուր յեկամուտով և միասին են ծախսում իրենց յեկամուտները: Ընտանիքի անդամներ չեն հաշվվում այն անձինք, վորոնք կտրել են իրենց չեն մասնակցում աշխատանքնկապն ընտանիքի հետ, չեն մասնակցում աշխատանքներում, չեն ոգնում ընտանիքին և չեն ստանում ոգնութեան նրանից: Յեթե այդպիսի անձինք (միայնակներ) վարում են առանձին տնտեսութեան և կոլտնտեսութեան անդամ են, ապա նրանք ցուցակագրվում են վորպես առանձին տնտեսութեաններ և նույնպես գրվում են 1-ին սյունյակում:

Յեթե կոլտնտեսութեան ընակչութեան թվի մեջ լի-

նեն այնպիսի անձինք—վորոնք վերցրած են մանկական տներից և ամբացած են առանձին ընտանիքներին, ապա նրանց պետք է հաշվել տվյալ ընտանիքների շնչերի թվի մեջ: Դրանցից կոլտնտեսություններում ինքնուրույն աշխատանքով ապրողները հաշվի են առնվում իբրև առանձին տնտեսություններ:

Կոլտնտեսությունում աշխատող գյուղատնտեսներին, ուսուցիչներին, հաշվետարների և նման անձանց տրնտեսությունները հաշվի չեն առնվում իբրև կոլտնտեսականներ, յեթե նրանք կոլտնտեսության անդամ են համարվում:

§ 64. 2-րդ «քնակչության» վերնագրով սյունյակում պետք է գրել կոլտնտեսության մեջ մշտապես ապրող և ժամանակավորապես բացակայող կոլտնտեսության անդամներին ու նրանց ընտանիքներին, վորոնք չեն կտրել իրենց կապը տնտեսության հետ: Հետևյալ սյունյակներում պետք է գրել կոլտնտեսության այն անդամներին, վորոնք բացակայում են 3 ամսից ավելի և կոլտնտեսության անդամների թիվը: Կոլտնտեսության անդամ են համարվում նրանք, ովքեր ունեն կոլտնտեսության անդամագրքույկներ: Դրանից հետո պետք է գրել կոլտնտեսության այն անդամների թիվը վորոնք ոգտվում են կարմիր բանակայինների համար սահմանված արտոնություններով (կարմիր բանակայիններ, կարմիր պարտիզաններ, հնչմանդամներ, չքանչաններով պարգևատրվածներ և այլն):

§ 65. Ցանքի համար հատկացված սյունյակները լրացնելու ժամանակ պետք է ղեկավարվել այս հրահանգի 5—7, 20—35-րդ §-ներով:

Կոլտնտեսության քարտի «արևածաղիկ»-ի սյունյակը լրացնելուց, պետք է հետևել, վոր արևածաղիկի ցանքի այն տարածությունը, վորը պլանով նախատեսված է սիլոսացման համար, այդ սյունյակում չգրվի: այդ տարածությունը պետք է գրվի «սիլոս»-ային կուլտուրաների սյունյակում:

«Սիլոսային կուլտուրաներ»-ի սյունյակում պետք է գրել սիլոսային կուլտուրաների ցանքը, վորի բերքը

հատկացվում է սիլոսային կերի համար: Այն սիլոսային մշակույթների տարածությունը, վորոնց բերքը չի հընձվում, այլ հերկվում է հողը պարարտացնելու համար, հաշվի չեն առնվում:

§ 66. Ետո կոլտնտեսություններում կարող են լինել զեպքեր, յերբ կոլտնտեսության ցանքի պլանը սահմանելուց հետո կոլտնտեսության մեջ մտնեն նոր տրնտեսություններ, վորոնք ցանքի պլան են ստացել վորպես մենատնտեսներ:

Յեթե այդպիսի տնտեսությունները մտնում են կոլտնտեսության մեջ մինչև մենատնտեսների հարկի վճարման առաջին ժամկետը և նրանք հարկվում են վորպես կոլտնտեսականներ, ապա այդ տնտեսությունների ցանքերի փարածությունները միացվում են կոլտնտեսության ցանքի պլանին: Այդպիսով կոլտնտեսության քարտում պետք է գրվի ինչպես կոլտնտեսության ցանքի տարածությունը նույնպես և կոլտնտեսության մեջ մտնող մենատնտեսների ցանքի տարածությունը:

Դյուղհարկի առաջին ժամկետը լրանալուց հետո կոլտնտեսության մեջ մտնող մենատնտեսների ցանքի տարածությունները կոլտնտեսության քարտում չեն գրանցվում:

§ 67. Կենդանարուծության հաշվառման ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալով՝

Անասունների քանակը վորոչվում է առ հաշվարում անցկացնելու որը կոլտնտեսության գույքացուցակի հիման վրա:

Անասունների հասակը վորոչվում է առ 1-ը մայիսի 1934 թ. ընդվորում անասունների հաշվառումը չպետք է կատարվի մեխանիկորեն կոլտնտեսության քարտում գույքացուցակից անասուններ գրանցելու միջոցով: Դյուղխորհուրդը պարտավոր է մանրագնեին ստուգել գույքացուցակի ճշտությունը, կատարել անասունների քանակի փաստացի ստուգում:

Կոլտնտեսության հաշվառման քարտում հաշվի պիտի առնել հանրայնացված բոլոր անասունները, թեկուզ գրա մի մասը կենտրոնացված չլինեն կոլտնտեսության համայնական գոմերում:

Բանող ձիերի թվում հաշվում են բոլոր այն ձիերը, վորոնք աշխատում են դաշտային աշխատանքներում, որանսպորտի մեջ և այլ փոխադրական կարիքների համար:

Կենդանաբուծութեան հաշվառման ժամանակ ապրանքային ֆերմաների անասունները հաշվի չեն առնվում առանձին, իսկ ֆերմաներից դուրս գտնվող անասուններն առանձին:

Կոլտնտեսութեան ապրանքային ֆերմաներ են համարվում միայն այնպիսիք, վորոնք չըջանային կամ հանրապետական հողմարմինների հետ ունեն կնքված պայմանագիր: Այդպիսի պայմանագրերի բացակայութեան դեպքում կոլտնտեսութեան հանրայնացված բոլոր անասունները հաշվի չեն առնվում իբրև ֆերմայից դուրս անասուններ:

Կոլտնտեսութեան հանրայնացված անասունները թե ֆերմայից դուրս և թե ֆերմաներում յենթակա չեն հաշվառման հետևյալ բաժանումով.

1) Ֆեղական և ազնվացված անասուններ և 2) այլ անասուններ: Այն անասունները, վորոնք դանազան կազմակերպութեան կողմից տրված են կոլտնտեսութեանը ժամանակավորապես պահելու կամ կերակրելու համար, հաշվառման քարտի կենդանաբուծութեան սյունյակներում ցույց չեն տրվում, բայց այնուամենայնիվ հաշվի չեն առնվում և գրվում են, «ծանոթութուն» սյունյակում: Այդ դեպքում ցույց է տրվում նաև պահ տված անասունների քանակը (յեղ, կով, ձի և այլն) և պահ տվող կազմակերպութեան անունը:

Անասունների վերաբերյալ քարտի բոլոր սյունյակները լրացվում են քարտի վերնագրերի ճիշտ իմաստով:

Չմեռած այծերի և վոչխարների սյունյակները լրացնելու ժամանակ, պետք է աչքի առաջ ունենալ, վոր ձմեռած չեն համարվում բոլոր այն վոչխարները և այծերը, վորոնք ծնված են մինչև 1934 թ. հունվարի 1-ը:

5. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎԱՅԼՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

§ 68. Գյուղի բոլոր տնտեսութունները. № 1 աքարտում, № 2 գ. և № 2 վ. գյուղացուցակներում հաշվի առնելուց հետո, գյուղհարկային հանձնաժողովը պարտավոր է մանրագնին ստուգել հաշվառման ճշտութունը: Այդ ստուգումը պետք է կատարել կազմակերպված հատուկ բրիգադների միջոցով տալով այդ աշխատանքին լայն հասարակական աշխատանքի ուղղութուն:

Ստուգումը պետք է պարզի, թե արդյոք հաշվառումից դուրս մնացել են տնտեսութուններ, անասուններ, վոչ-գյուղատնտեսական յեկամուտներ, ճիշտ և հաշվառած ցանքի տարածութունն ըստ պլանի և այլն:

Ստուգելու նպատակով գյուղխորհուրդը հաշվառման տվյալները համեմատութեան մեջ է դնում առանձին տնտեսութունների՝ 1) գյուղխորհրդի կողմից տրված գարնանացանի և աշնանացանի պլանների հետ. 2) հացահատիկային և ուրիշ մշակույթների տարածութունների հետ, վորոնց հիման վրա վորոշված է տվյալ տնտեսութեան հացահատիկի, կարտոֆիլի և այլ պարտավորութունը, 3) կովերի և վոչխարների քանակի հետ, վորոնց հիման վրա վորոշված է պետութեան կաթ և բուրբ հանձնելու պարտավորութունը, 4) 1933 թ. առ ՎՍ 1934 թ. և վերահաշվառման (9 չըջանում) հաշվառման տվյալների հետ և այլն:

Հաշվառման արդյունքները ստուգելու ժամանակ հատուկ ուշադրութուն պետք է դարձնել այն մենատնտեսների և կոլտնտեսականների տնտեսութունների հաշվառման ճշտութեան վրա, վորոնք հարկվող յեկամրտի աղբյուրներ չունեն:

Կոլտնտեսականների տնտեսութունների թվի հաշվառման տվյալները (գյուղացուցակ № 2 վ.) պետք է լրիվ համապատասխանեն կոլտնտեսութունների քարտերում հաշվառած տնտեսութունների թվին ձև № 1 ա.): Այդ տվյալների մեջ տարբերութուններ լինելու դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք բաց չեն թողնված տնտեսութուններ կոլտնտեսականների գյուղացուցակում, կամ կոլտնտեսութունների քարտում տրն-

տեսութ յունները ցույց են տրված լրիվ, թե վոչ: Տարբերութ յունների պատճառները պարզելուց հետո անհրաժեշտ է կատարել համապատասխան ուղղումներ (լրացուցիչ գրել գյուղացուցակի մեջ բաց թողնված կոլտնտեսականների տնտեսութ յունները, կամ կոլտնտեսութ յան քարտում կատարել համապատասխան ուղղումներ):

Բացի դրանից կոլտնտեսականների հաշվառման տվյալները պետք է ճշտել կոլտնտեսութ յան վարչութ յունում յեղած ցուցակի հետ այն իմաստով, վորպեսզի այդ ցուցակում ցույց տրված կոլտնտեսականների թիվը համապատասխանի կոլտնտեսութ յան տվյալներին: Հաշվառման ընթացքում սխալներ հայտնաբերելու դեպքում, գյուղացուցակներում պետք է կատարել ուղղումներ և անհրաժեշտ դեպքերում կատարել վերահաշվառում:

§ 69. Երջանային Ֆինրաժինը նախքան գյուղհարկի հաշվարկման աշխատանքներին անցնելը, նույնպես պետք է ստուգի հաշվառման տվյալների ճշտութ յունը համեմատութ յան դնելով անցյալ տարվա տվյալների և ուրիշ նյութերի հետ, վորոնք կլինեն շրջանի զանազան կազմակերպութ յուններում: Մասնավորապես գյուղացուցակների ցանքերին հատկացված սյունյակների տրվյալները պետք է համեմատութ յան դնել հողբաժնի զարնանացանի և աշնանացանի պլանների հետ ըստ առանձին գյուղերի:

Բոլոր դեպքերում գյուղացուցակներում սխալներ հայտնաբերելիս անհրաժեշտ է կատարել ուղղում: Գյուղի կոնտրոլ նյութերի և հաշվառման տվյալների մեջ տարբերութ յուններ լինելու դեպքում տվյալ գյուղում անհրաժեշտ է կատարել վերահաշվառում:

ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ
ԵՐԶԱՆԱՅԻՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ցուցակները կազմելուց հետո, գյուղխորհուրդը հաշվում է ընդհանուր գումարները և ցուցակներն անմիջապես ուղարկում շրջանային Ֆինրաժին:

Երջանային Ֆինրաժինը ստուգում է ցուցակները և արդարյալները յուրաքանչյուր գյուղխորհուրդից ստանալուց 2 օրից վոչ ուշ, իր ստորագրութ յամբ հանձնում է ժողտնտ. հաշվառման շրջանային տեսչին:

Ցուրաքանչյուր գյուղխորհուրդից կոլտնտեսութ յունների կարտերը և տնտեսութ յունների ցուցակները ստանալուց հետո 2 օրից վոչ ուշ՝ շրջանային Ֆինրաժինը նախքան գյուղատնտեսական հարկի և ապահովագրական վճարումների հաշվելը, պետք է ժողտնտհաշվառման շրջանային տեսչին հանձնի տնտեսութ յունների հաշվառման տվյալները, վորոնք անհրաժեշտ են շրջանային ամփոփումները կազմելու համար:

Հաշվառման տվյալները ժողտնտ. հաշվառման շրջանային տեսչին հանձնելու դեպքում, վերջինս պարտավոր է ոգտագործելուց հետո 2 օրվա ընթացքում վերադարձնել շրջանային Ֆինրաժինին:

Կոլտնտեսութ յունների, կոլտնտեսականների և մեծառնտեսների ընկալութ յան և անասունների հաշվառման արդյունքները նկատմամբ կատարած բոլոր լրացուցիչ հայտնաբերումների փոփոխութ յունների ու ճշտումների մասին, շրջանային Ֆինրաժինը պարտավոր է իրազեկ դարձնել ժողտնտ. հաշվարչութ յան շրջանային տեսչին: Կոլտնտեսութ յունների կոլտնտեսականների և մեծառնտեսների ընկալութ յան անասունների վերաբերյալ շրջանային տեսչին ամփոփումները պետք է հաստատված լինեն շրջանային Ֆինրաժնի կողմից:

Մասայական վճարումների սեկտոր

ՀՀ Ազգային գրադարան



NL0977036

11

26668